

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Անխոցելի դառնաս մինչեւ
 Պիսի խոցուիս հազար անգամ,
 Կ'ըլլայ յետոյ խօսքդ պատգամ,
 Կը շողայ փառքդ ինչպէս արեւ :

Հէ՛ք եղբայր, բախտիդ մերք կը մըսածեմ,
 Մեղաւոր մարդեր քեզ պիտի խաչեն,
 Թաղեն քեզի նեւ իրենց սխն ու քէն,
 Պաշտեն իբրեւ սուրբ երբ ու՛ է արդէն :

*
* * *

Ի՛նչ մընաց ինծ՝
 Ոչինչ,
 Ոչ յուզ, ոչ յոյս, ոչ կարօս,
 Ոչ համ, ոչ հոս.
 Ուրեմն երբամ մօրքս մօս,
 Գըսնեմ քերեւս հին օրերն,
 Ե՛ւ երազ ե՛ւ սէր...

- Հապա եթէ մութ գիշերն
 Տարածուի անվերջ,
- Կը բընանամ ես անդորր,
 Ոչինչ չեմ յիշեր,
 Կը դառնայ ցամաք անգոր :

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ